ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» օգոստոսի 2002թ. N 206

ք. Ստեփանակերտ

Առևտրի հարկ վճարողների կողմից եկամուտների և ծախսերի հաշվառման կարգի մասին

«Առևտրի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել առևտրի հարկ վճարողների կողմից եկամուտների և ծախսերի հաշվառման կարգը (կցվում է):

2. Սահմանել, որ՝

ա/ առևտրի հարկ վճարողներն այդպիսին համարվելու հաշվետու ժամանակաշրջանում առևտրի հարկով հարկվող գործունեության մասով կարող են չվարել հաշվապահական հաշվառում.

բ/ բացառապես առևտրի հարկ վճարող հանդիսացող առևտրային կազմակերպությունները[*1)] հարկային մարմիններ ֆինանսական[*1)] հաշվետվություններ կարող են չներկայացնել.

գ/ առևտրի հարկ վճարողները վարում են եկամուտների և ծախսերի հաշվառման գիրք.

դ/ առևտրի հարկ վճարողները վարում են դրամարկղային գրքեր՝ Լեռնային Ղարբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով.

ե/ առևտրի հարկ վճարողները վարում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000թ. դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում առաքվող կամ տրամադրվող, կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում վաճառվող արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) մասին» թիվ 255 որոշմամբ սահմանված առաքվող, տեղափոխվող ապրանքների գրանցման (հաշվառման) գրքեր և արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) գրքեր:

3. Առևտրի հարկ վճարողների վրա տարածվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000թ. դեկտեմբերի 26-ի «Ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանելու և այդ փաստաթղթերի կազմման կարգը հաստատելու մասին» թիվ 254 որոշման դրույթները:

4. Սույն որոշմամբ հաստատված կարգի վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերը սահմանված կարգով հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչությունը՝ համաձայնեցնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

5. Սույն որոշմամբ հաստատված կարգի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչությունը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հաստատված է
ԼՂՀ կառավարության 2002 թվականի
օգոստոսի 20-ի թիվ 206 որոշմամբ

Կ Ա Ր Գ

Առևտրի հարկ վճարողների կողմից եկամուտների և ծախսերի հաշվառման

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգը կարգավորում է «Առևտրի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 14 հոդվածի 7-րդ կետին համապատասխան առևտրի հարկ վճարողների կողմից եկամուտների և ծախսերի հաշվառման հետ կապված հարցերը:

2. Առևտրի հարկ վճարող հանդիսացող առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերն այդպիսին համարվելու հաշվետու ժամանակաշրջանում գործունեության այդ մասով վարում են եկամուտների և ծախսերի հաշվառման գիրք (այսուհետ՝ հաշվառման գիրք, էջի ձևը կցվում է):

3. Հաշվառման գրքի էջերը համարակալվում, կարվում և կազմվում են, որից հետո հաշվառման գիրքը ներկայացվում է առևտրի հարկ վճարողի հաշվառման վայրի հարկային մարմին՝ կնքման: Կնքված և համարակալված հաշվառման գիրքը խիստ հաշվառման փաստաթուղթ է և հերթական համարով հաշվառվում է հարկային մարմնում: Հարկային մարմինը պարտավոր է կնքել և վերադարձնել հաշվառման գիրքը մեկ օրացուցային օրվա ընթացքում:

Հաշվառման գրքի կազմի վրա նշվում է առևտրի հարկ վճարողի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը, հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), գտնվելու (բնակության) վայրի հասցեն և գրքի հերթական համարը: Գործունեության վայրի հասցեն առևտրի հարկ վճարողի գտնվելու (բնակության) վայրի հասցեից տարբերվելու դեպքում նշվում է նաև այդ վայրի հասցեն:

4. Առևտրի հարկով հարկվող գործունեության յուրաքանչյուր տեսակի (խանութների, կրպակների (տաղավարների), պահեստների [*1)] միջոցով վաճառք) համար վարվում է առանձին հաշվառման գիրք:

5. Լրացված-ավարտված հաշվառման գրքերը պահվում են առևտրի հարկ վճարողի մոտ՝ մինչև այդ գրքում վերջին գրանցման օրվանից սկսած 3 տարին լրանալը:

Հաշվառման գրքի լրանալուց-ավարտվելուց հետո առևտրի հարկ վճարողը սույն կարգի 3-րդ կետում նշված կարգով նոր հաշվառման գիրք է ներկայացնում հարկային մարմին՝ կնքման և համարակալման համար:

II. Եկամուտների և ծախսերի գրանցման կարգը

6. Հաշվառման գրքերում գրանցման (հաշվառման) ենթակա են առևտրի հարկ վճարողի կողմից կատարված ցանկացած տնտեսական գործառնությունը՝ ժամանակագրական կարգով:

7. Հաշվառման գրքերում կատարվող գրանցումների համար հիմք է հանդիսանում տնտեսական գործառնության կատարման փաստը, որը հիմնավորվում է սկզբնական հաշվառման փաստաթղթերով:

Սկզբնական փաստաթղթերը հաշվառվում են մինչև գործառնության կատարման օրվա վերջը:

Չի թույլատրվում սկզբնական փաստաթղթերում կատարել չծանուցված ուղղումներ: Սխալի ուղղումը պետք է հաստատված լինի տվյալ փաստաթուղթն ստորագրելու իրավունք ունեցող անձի ստորագրությամբ, և պետք է նշվի ուղղման ամսաթիվը:

8. Հաշվառման գրքում հերթական համարով նշվում են տնտեսական գործառնության կատարման ամիսը և ամսաթիվը, բովանդակությունը, սկզբնական փաստաթղթի անվանումն ու հերթական համարը, ինչպես նաև կատարված (հաշվարկված) ուղղակի և ընդհանուր տնտեսական ծախսերն ու հաշվարկված եկամուտները (իրացման շրջանառությունից և այլն):

Առևտրի հարկի հաշվարկման առումով՝

ուղղակի տնտեսական ծախսեր են համարվում ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման հետ անմիջականորեն կապված ծախսերը.

ընդհանուր տնտեսական ծախսեր են համարվում հարկատուի գործունեության հետ կապված վարչական և ուղղակի տնտեսական ծախսերին չվերաբերող այլ ծախսերը:

9. Ընդհանուր տնտեսական ծախսերը առևտրի հարկ վճարողների կողմից գրանցվում են հաշվառման գրքում՝ բացառապես առևտրի հարկով հարկվող գործունեության իրականացման դեպքում:

Ընդ որում, առևտրի հարկով հարկվող գործունեության տարբեր տեսակների (խանութների, կրպակների (տաղավարների), պահեստների*1) միջոցով վաճառք) իրականացման դեպքում կատարված ընդհանուր տնտեսական ծախսերը գրանցվում են հաշվառման գրքերից որևէ մեկում՝ հարկատուի հայեցողությամբ:

10. Մատակարարված ապրանքների (որոնց գծով առաջանում է իրացման շրջանառություն) դիմաց հաշվարկված եկամուտների գրանցումը ներառում է հաշվառման գրքի 2-4-րդ և 7-րդ սյունակների լրացումը: Հաշվարկված այլ եկամուտների (մատակարարված ապրանքների հետ անմիջականորեն կապված մատուցված ծառայությունների) գրանցումը ներառում է հաշվառման գրքի 2-4-րդ և 8-րդ սյունակների լրացումը:

Կատարված (հաշվարկված) ուղղակի ծախսերի գրանցումը ներառում է հաշվառման գրքի 2-5-րդ սյունակների լրացումը: Կատարված (հաշվարկված) ընդհանուր տնտեսական ծախսերի գրանցումը ներառում է 2-4-րդ և 6-րդ սյունակների լրացումը:

Այն տնտեսական գործառնության համար, որի գծով չեն հաշվառվում եկամուտներ և (կամ) ծախսեր, լրացվում են միայն հաշվառման գրքի 2-4-րդ սյունակները, (5-6-րդ սյունակները չեն լրացվում):

11. Հաշվառման գրքում սխալ թույլ տալու դեպքում տողի վրա գիծ է քաշվում այնպես, որ հնարավոր լինի կարդալ նախկին գրառումը, և հերթական ազատ տողում կատարվում է ճիշտ գրանցումը՝ նշելով սխալ գրանցված տողի համարը: Ձնջված տողի կողքին կատարվում է համապատասխան նշագրում սխալ գրառման մասին:

12. Առևտրի հարկ վճարողները հաշվառման տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով կարող են անցկացնել գույքի և պարտավորությունների գույքագրում, որի արդյունքները ներառվում են հաշվառման գրքում:

13. Սկզբնական հաշվառման փաստաթղթերը իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից պահպանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում, բայց առնվազն հինգ տարի:

III. Պատասխանատվությունը սույն կարգի պահանջների խախտման համար

14. Սույն կարգի պահանջների խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Եկամուտների և ծախսերի հաշվառման գրքեր չունենալու կամ գրքերը խախտումներով վարելու, աշխատանքի իրականացման ժամանակ գրքերը ապրանքների ցուցադրման և անմիջական վաճառքի վայրերում չպահելու դեպքերում հարկային մարմինը կիրառում է «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը:

15. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային մարմինների կողմից սույն կարգի պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում առևտրի հարկ վճարողը ճշգրտումներ (գրանցումներ) է կատարում հաշվառման գրքում և հաշվառմանը վերաբերող այլ փաստաթղթերում:

Եկամուտների և ծախսերի հաշվառման գրքի էջի

NN ը/կ	Ամիսը, ամսաթիվը	Գործարքի (գործառնության) բովանդակությունը	Սկզբնական փաստաթղթի անվանումը և հերթական համարը	Կատարված (հաշվարկված) ուղղակի ծախսերը (հազ. դրամ)	Կատարված (հաշվարկված) ընդհանուր տնտեսական ծախսերը (հազ. դրամ)	Հաշվարկված եկամուտները իրացման շրջանառությունից (հազ. դրամ)	Հաշվարկված այլ եկամուտներ (հազ. դրամ)
1	2	3	4	5	6	7	8
1							
2							
3							
4							
5							
6							
7							
8							
9							
10							
11							
12							
13							
14							
15							
16							
17							
18							
19							
20							

*1) ԼՂՀ կառավարության 24.01.06թ. «ԼՂՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 20-ի թիվ 206 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 28 որոշման խմբագրությամբ